

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«--» ----- » 2019թ.

N----- Ն

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 47-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 35-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի մասին» N 47-Ն որոշմամբ հաստատված.

- 1) եկամուտների գումարը ավելացնել 116,026.9 հազար դրամով,
- 2) ծախսերի գումարն ավելացնել 7,286,977.3 հազար դրամով,
- 3) դեֆիցիտի (պակասուրդի) գումարը ավելացնել 7,170,950.4 հազար դրամով:

2. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի մասին» N 47-Ն որոշմամբ հաստատված NN 1-7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-7 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի եկամուտների մասում տեղական տուրքերը ավելացնել 75,400.0 հազար դրամով՝ Երևան համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար, Երևան քաղաքում քաղաքաշինական գործունեության և բարեկարգման նպատակով հատկացման/գլխավոր հատկագիծ/ հայտի համար տեղական վճարի մուտքերն ավելացնել 49,300.0 հազար դրամով:
- Հաշվի առնելով, որ Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեով ՀՀ պետական բյուջեից ստացվելիք գումարները ծրագրվել էին ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշներով, ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի (ՀՀ ԱԺ-ի կողմից հաստատված) և ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման համաձայն պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների գումարներում ըստ ծրագրերի կատարվել են ճշգրտումներ և փոփոխություններ, որի արդյունքում ընդհանուր գումարը նվազել է 9,033.1 հազար դրամով, այդ թվում՝
 - Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման համար նախատեսված սուբսիդիայի գումարը նվազեցվել է 9,909.6 հազար դրամով,
 - քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման համար հատկացվող գումարներն ավելացել են 876.5 հազար դրամով:
- ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի և ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման համաձայն Երևան համայնքին հատկացվելիք սուբվենցիայի գումարներում ևս ըստ ծրագրի կատարվել է

փոփոխություն, ինչի արդյունքում Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացման համար ծրագրով հատկացվելիք սուբվենցիայի ընդհանուր գումարն ավելացել է 360.0 հազար դրամով:

Նախագծով նախատեսվում է ՀՀ 2019 թվականի պետական բյուջեում կատարված վերը նշված բոլոր փոփոխություններն արտացոլել Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեում:

- Հաշվի առնելով 2018 թվականի Երևանի բյուջեի փաստացի կատարողականի արդյունքները և տարեսկզբի ազատ մնացորդի ճշգրտված չափը.
 - Նախագծով առաջարկվում է «Կառավարման մարմնի պահպանում» ծրագրով նախատեսված գումարներն ավելացնել 80,576.0 հազար դրամով, որից`
 - . էներգետիկ ծառայություններ հոդվածով` 5,125.0 հազար դրամի նվազեցում,
 - . կապի ծառայություններ հոդվածով` 1,000.0 հազար դրամի նվազեցում,
 - . ապահովագրական ծախսեր հոդվածով` 443.0 հազար դրամի ավելացում, ինչը պայմանավորված է ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության գների բարձրացմամբ,
 - . գույքի և սարքավորումների վարձակալություն հոդվածով` 10,080.0 հազար դրամի ավելացում, ինչը պայմանավորված է` Երևանի քաղաքապետարանի և «Երևանտրանս» ՓԲԸ միջև կնքված վարձակալության պայմանագրի շրջանակներում սպասարկվող 11 ավտոմեքենայի վարձակալությամբ` նախատեսված 9 ավտոմեքենայի փոխարեն,
 - . արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը նվազեցնել 70,750.0 հազար դրամով, հաշվի առնելով փաստացի նախատեսված գործուղումների ծավալները,
 - . համակարգչային ծառայություններ հոդվածով` 420.0 հազար դրամի ավելացում, ինչը պայմանավորված է Կենտրոն վարչական շրջանում հերթերի կառավարման համակարգի ծրագրային սպասարկման ներդրմամբ,

- . աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ հոդվածով՝ 20,000.0 հազար դրամի նվազեցում, հաշվի առնելով փաստացի նախատեսված վերապատրաստումները.
- . տեղեկատվական ծառայություններ հոդվածով՝ 55.0 հազար դրամի ավելացում, ինչը պայմանավորված է Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների համար շնորհակալագրերի, պատվոգրերի և բլանկների տպագրական աշխատանքների ավելացմամբ,
- . կենցաղային և հանրային սննդի ծառայություններ հոդվածով՝ 26,600.0 հազար դրամի ավելացում, ինչը իրենից ներկայացնում է քաղաքապետարանի ճաշարանային ծառայության ձեռք բերման դիմաց վճարումը,
- . ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածով՝ 3,100.0 հազար դրամի ավելացում, ինչը պայմանավորված է «Սոցիալական մեդիա մարքեթինգի» և «Մեդիամոնիթորինգի» ծառայությունների ավելացմամբ,
- . մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածով՝ 50,219.7 հազար դրամի ավելացում, ինչը պայմանավորված է Երևանի քաղաքապետարանի և «Երևանտրանս» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակներում թվով 51 ավտոմեքենաների, ինչպես նաև վաչական շրջանների ավտոմեքենաների սպասարկման ծառայությունների մատուցմամբ,
- . գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով՝ 5,818.0 հազար դրամի ավելացում, ինչը նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի, Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների «Մեկ պատուհանի» աշխատակիցների համար համազգեստի և բեյջերի ձեռք բերման, ինչպես նաև Կենտրոն վարչական շրջանում գրասենյակային ապրանքների որոշ տեսակների քանակների ավելացման համար,
- . տրանսպորտային նյութեր հոդվածով՝ 25,258.4 հազար դրամի ավելացում, ինչը սակայն 2018թ. բյուջեի փաստացի ծախսի նկատմամբ պակաս է շուրջ 30%-ով: Տրանսպորտային նյութերի պահանջարկի ավելացումը պայմանավորված է աշխատակիցների կողմից կատարվող

աշխատանքների ծավալի մեծացմամբ և միտված է այդ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը,

- . կենցաղային և հանրային սննդի նյութեր հողվածով 100.0 հազար դրամի ավելացում` Դավթաշեն վարչական շրջանի կարիքների համար տնտեսական գործիքներ ձեռք բերելու նպատակով,
- . հատուկ նպատակային այլ նյութեր հողվածով 1,000.0 հազար դրամի ավելացում` Ավան վարչական շրջանի վարչական շենքի, կից կաթսայատան, շրջակա տարածքի ընթացիկ նորոգման նպատակով նյութերի ձեռք բերման համար,
- . պարտադիր վճարներ հողվածով 104.8 հազար դրամի ավելացում` թվով 6 ավտոմեքենաների ավտոկայանատեղի և տեխ. զննման վճարների կատարման համար,
- . այլ ծախսեր հողվածով նախատեսվում է 200.0 հազար դրամի նվազեցում,
- . վարչական սարքավորումներ հողվածով 18,902.1 հազար դրամի ավելացում, որը հիմնականում նախատեսված է փաստաթղթաշրջանառության նոր էլեկտրոնային համակարգին անխափան անցումն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների համար համակարգչային տեխնիկա ձեռք բերելու համար,
- . այլ մեքենաներ և սարքավորումներ հողվածով 35,550.0 հազար դրամի ավելացում, որից ավագանու նիստերի ընթացքում քվերակության համակարգի ձեռք բերում և տեղադրում` 34,000.0 հազար դրամ, գույքագրման սարքերի ձեռք բերում` 1,000.0 հազար դրամ և Կենտրոն վարչական շրջանի վարչական շենքի համար ուղեփակոցի ձեռք բերում` 550.0 հազար դրամ:
- Նախագծով առաջարկվում է «Վարչական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրին ավելացնել 23,900.0 հազար դրամ, Աջափնյակ, Դավթաշեն, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ վարչական շրջանների վարչական շենքերի նորոգման աշխատանքների համար:
- Նախագծով առաջարկվում է «Նախագծային աշխատանքներ» ծրագրին ավելացնել 38,257.2 հազար դրամ, Երևան քաղաքի ճոպանուղու, մետրոյի

նոր կայարանի և վարչական շրջաններում նոր կապիտալ ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար:

- Նախագծով առաջարկվում է 90,000.0 հազար դրամ հատկացնել Երևան քաղաքի գլխավոր հատակագծի մշակման իրականացմանը՝ մինչև 2030 թվականը զարգացման հեռանկարով:
- Նախագծով առաջարկվում է «Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարումներ» ծրագրին ավելացնել 500.0 հազար դրամ, Նոր Նորք վարչական շրջանում դատարան ներկայացվող հայցադիմումների ավելացմամբ պայմանավորված:
- Նախագծով առաջարկվում է «Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն» ծրագրին ավելացնել 12,130.0 հազար դրամ, քաղաքացիական պաշտպանությանը աջակցելու նպատակով գրասենյակային ապրանքների, տնտեսական ապրանքների և վարչական սարքավորումների ձեռք բերման համար, հաշվի առնելով որ նախորդ տարում «Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն» ծրագրով նախատեսված 15,000.0 հազար դրամի ֆինանսավորում չի կատարվել, ինչը պայմանավորված էր գնումների գործընթացի ժամանակային խնդրի հետ:
- Նախագծով առաջարկվում է «Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում» ծրագրին ավելացնել 18,584.2 հազար դրամ, Նորք-Մարաշ վարչական շրջանում ոռոգման ցանցի հիմնանորոգման համար:
- Նախագծով առաջարկվում է «Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում» ծրագրից նվազեցնել 251,750.0 հազար դրամ:
- Նախագծով առաջարկվում է «Եզրաքարերի վերանորոգում» ծրագրին ավելացնել 1,000.0 հազար դրամ, Արաբկիր վարչական շրջանում եզրաքարերի վերանորոգման համար:
- Նախագծով առաջարկվում է «Հենապատերի վերանորոգում» ծրագրին ավելացնել 13,276.4 հազար դրամ, Կենտրոն վարչական շրջանում Շարա Տալյան փողոցից(նախկին Այգեստան 6-րդ փող.) դեպի Չարենց փողոց, Պարոնյան 1, Սայաթ-Նովա 21, Այգեստան 11-րդ փողոց 175-179 տների դիմաց և Սարյան 24 հասցեների հենապատերի վերանորոգման համար:

- Նախագծով առաջարկվում է «Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում» ծրագրին ավելացնել 415,000.0 հազար դրամ՝ Մաշտոցի պողոտայի և Գրիգոր Լուսավորիչ փողոցների հատույթի ստորգետնյա անցումի, Մաշտոցի պողոտայի ստորգետնյա անցումի («Երևան Սիթիի» մոտ), Կոմիտաս և Ազատության պողոտաների հատույթի ստորգետնյա անցումի, Թբիլիսյան խճուղու ստորգետնյա անցումի (Լամպերի գործարանի մոտ), Ազատության պողոտայի ստորգետնյա անցումի («Հաղթանակ զբոսայգու» դիմաց) և մետրոյի «Հանրապետության հրապարակ» կայարանի վերգետնյա հատվածի և այլն գետնանցումների վերանորոգման և լուսավորության վերականգման համար:
- Նախագծով առաջարկվում է «Հրազդանի կիրճի բարեկարգում» ծրագրին ավելացնել 2,000.0 հազար դրամ, Հրազդանի կիրճում 120 գծմ մետաղական արգելապատնեշի վերանորոգման և նորի կառուցման համար:
- Նախագծով առաջարկվում է «Թեքահարթակների կառուցում» ծրագրից նվազեցնել 20,000.0 հազար դրամ: 2018 թվականին հաստատված 30,000 հազար դրամի դիմաց՝ 2019 թվականին աշխատանքները կիրականացվեն 80,000.0 հազար դրամի չափով:
- Նախագծով առաջարկվում է «Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում» ծրագրին ավելացնել 50,000.0 հազար դրամ, շենքերի և փողոցների անվանումների թվով 10000 հատ միասնական ցուցանակների պատրաստման և տեղադրման համար:
- Նախագծով առաջարկվում է «Վերելակների հիմնանորոգում» ծրագրին ավելացնել 90,000.0 հազար դրամ, քանի որ թվով 3 անգամ ավելացել են սպասարկվող վերելակները և սահմանվել են անվտանգության նոր չափանիշներ,
- Նախագծով առաջարկվում է 83,000.0 հազար դրամով ավելացնել «Երևանի քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի սուբսիդիան, ինչը պակաս է 2018 թվականի փաստացի տրված սուբսիդիայից 17,000.0 հազար դրամով:
- Նախագծով առաջարկվում է 50,000.0 հազար դրամով ավելացնել «Տոնական ձևավորում» ծրագիրը՝ Ամանորին Երևան քաղաքի գլխավոր փողոցները

նորաճ լուսային ձևավորմամբ ապահովելու նպատակով, ինչը պակաս է 2018 թվականի փաստացի կատարված ծախսից 12,475.0 հազար դրամով:

- Նախագծով առաջարկվում է «Հասցեավորման աշխատանքներ» ծրագրիը նվազեցնել 115,000.0 հազար դրամով, կապված «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՓԲԸ-ի լուծարման հետ:
- Նախագծով առաջարկվում է 200,000.0 հազար դրամ հատկացնել «Երևանտրանս» ՓԲԸ-ի տարածքում մեքենաների փակ կայանատեղի(անգար) կառուցման աշխատանքների իրականացման համար:
- Նախագծով առաջարկվում է 30,000.0 հազար դրամ հատկացնել Երևան քաղաքում հրատապ լուծում պահանջող ընթացիկ շինարարական աշխատանքների իրականացման համար:
- Նախագծով առաջարկվում է 49,300.0 հազար դրամ հատկացնել «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ին՝ հատակագծի նախապատրաստման և կազմման աշխատանքների իրականացման համար:
- Նախագծով առաջարկվում է 40,000.0 հազար դրամ հատկացնել քաղաքային աղբավայրի տարածքում ցանկապատի, պահակակետի, լվացման կետի և ախտահանման ավազանի կառուցման համար:
- Նախագծով առաջարկվում է 35,000.0 հազար դրամ հատկացնել Դավիթ Բեկի փողոցին հարակից և Փիրույան թաղամասերի ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցման աշխատանքներին:
- Նախագծով առաջարկվում է 142,000.0 հազար դրամով ավելացնել «Կանաչ տարածքների հիմնում և պահպանում» ծրագրիը, որից ծառերի էտման համար 23,000.0 հազար դրամ, Սիլիկյան թաղամասին հարող աղբավայրի տարածքում և Հաղթանակ զբոսայգու տարածքում անտառների ստեղծման համար 36,000.0 հազար դրամ, ծառատունկի իրականացման նպատակով տնկիների, թփերի ձեռք բերման համար 71,000.0 հազար դրամ և «Նոր բարեկարգում» ՓԲԸ-ի տնկարանի խնամքի և պահպանման նպատակով դրամաշնորհի տրամադրման համար 12,000.0 հազար դրամ:
- Նախագծով առաջարկվում է 1,500.0 հազար դրամով ավելացնել «Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում» ծրագրիը՝

Կոմիտասի անվան այգում նոր կառուցված հասարակական զուգարանի պահպանման համար:

- Նախագծով առաջարկվում է 17,000.0 հազար դրամով ավելացնել «Միզամարգերի ստեղծում և ծաղկապատում» ծրագիրը՝ կենսահումուսի, բուսականների, ծաղիկների, ծաղկասածիլների, փովոդ գիհիների, ծաղկոդ թփերի, ծաղկի սերմերի ձեռք բերման համար:
- Նախագծով առաջարկվում է 150,000.0 հազար դրամով ավելացնել «Թափառող կենդանիների վնասազերծում» ծրագիրը՝ նոր ստեղծված «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի սուբսիդիավորման և անհրաժեշտ շինությունների շինարարական աշխատանքների իրականացման համար:
- Նախագծով առաջարկվում է 32,000.0 հազար դրամով ավելացնել «Ինքնակամ կառույցների քանդում» ծրագիրը՝ էքսկավատորի ձեռք բերման համար:
- Նախագծով առաջարկվում է 40,000.0 հազար դրամ հատկացնել Օպերայի և բալետի ազգային թատրոնի և ևս 2 շենքերի գեղարվեստական լուսավորման ծրագրին:
- Նախագծով առաջարկվում է 9,000.0 հազար դրամով ավելացնել «Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում» ծրագիրը՝ Կենտրոն վարչական շրջանում հարթ տանիքների վերանորոգման համար:
- Նախագծով առաջարկվում է 148,415.0 հազար դրամով ավելացնել «Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում» ծրագիրը՝ Ավան, Կենտրոն, Արաբկիր, Էրեբունի վարչական շրջաններում թվով 14 բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգման, ինչպես նաև թեք տանիքների վերանորոգման՝ ցինկապատ թիթեղների և փայտանյութի ձեռք բերման համար, որը 2018թ. փաստացի ծախսի նկատմամբ ավել է շուրջ 218,000.0 հազար դրամով:
- Նախագծով առաջարկվում է 69,830.5 հազար դրամով ավելացնել «Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում ու պահպանում» ծրագիրը՝ վարչական շրջաններում համատիրություններին տրամադրվող սուբսիդիաները 55,936.8 հազար դրամով նվազեցնելու, իսկ բակային

տարածքների և խաղահրապարակների ընթացիկ նորոգումը 78,167.3 հազար դրամով և հիմնանորոգումը 47,600.0 հազար դրամով ավելացնելու համար:

- Նախագծով առաջարկվում է 42,663.1 հազար դրամով ավելացնել «Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ» ծրագիրը, այդ թվում 9,788.4 հազար դրամ նվազեցնել «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը՝ 114,788.4, հազար դրամով նվազեցվել է թվով 2 շենքերի վերականգման-ամրացման աշխատանքների գումարները և 105,000.0 հազար դրամ ավելացվել է 3-րդ կարգի վթարային շենքերի ամրացման աշխատանքների իրականացման համար, 5,000.0 հազար դրամ ավելացնել «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածը՝ կոյուղատար համակարգի մաքրման սարքավորման և բենզինային շարժիչով կեղտաջրերի մաքրման պոմպի ձեռք բերման համար, 47,251.5 հազար դրամով ավելացնել «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածը՝ բազմաբնակարան շենքերի մուտքերի ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացման համար, 200.0 հազար դրամով ավելացնել «Հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածը՝ Շենգավիթ վարչական շրջանում ավտոտնակները գունանշումով համարակալելու համար:
- Նախագծով առաջարկվում է 170,000.0 հազար դրամով ավելացնել «Կամարանցումների և այլ շինությունների վերանորոգում և գունազարդում» ծրագիրը՝ ճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի ֆասադների արդիականացման, արտաքին տեսքի վերականգնման նպատակով:
- Նախագծով առաջարկվում է 21,893.9 հազար դրամով ավելացնել «Վթարային պատշգամբների նորոգում» ծրագիրը,
- Նախագծով առաջարկվում է 21,500.0 հազար դրամով նվազեցնել «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում» ծրագիրը և նույն չափով ավելացնել «Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում» ծրագրին՝ բնակչությանը սքրինինգային հետազոտություն տրամադրելու համար:
- Նախագծով առաջարկվում է 30,000.0 հազար դրամով ավելացնել «Սպորտային միջոցառումների կազմակերպում» ծրագիրը՝ Համահայկական

խաղերին Երևան քաղաքի մարզական պատվիրակության նախապատրաստման և մասնակցության համար:

- Նախագծով առաջարկվում է 150,000.0 հազար դրամով ավելացնել «Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում» ծրագիրը՝ 40,000.0 հազար դրամ Երևանի 2800 ամյակի այգու էլեկտրաէներգիայի ծախսի, 10,000.0 հազար դրամ Սիրահարների այգու պահպանման ծախսերի ավելացման և 100,000.0 հազար դրամ Մարգարյան փողոցին հարակից այգու ջրավազանի վերանորոգման համար:
- Նախագծով առաջարկվում է 19,500.0 հազար դրամով ավելացնել «Հեծանվահրապարակի շահագործում» ծրագիրը:
- Նախագծով առաջարկվում է 225,000.0 հազար դրամով ավելացնել «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագիրը, որից 140,000.0 հազար դրամը Երևանի 2801 ամյակին նվիրված Էրեբունի-Երևան միջոցառման, իսկ 35,000.0 հազար դրամը Տիգրան Մանսուրյան-80, Արթուր Մեսչյան-70, Երվանդ Մանարյան-95, Տիգրան Հեքեքյան-60, Ռ. Ադայան-90, Ռոբերտ Ամիրխանյան-80, Պատանի հանդիսատեսի թատրոնի 90, Դրամատիկական թատրոնի 50 հոբելյանական ամյակներին նվիրված միջոցառումների, 35,000.0 հազար դրամը Երևանյան օրերը Արցախում, Գյումրիում, Վանաձորում միջոցառումների իրականացման, իսկ 15,000.0 հազար դրամը հասարակական կազմակերպություններին նվիրատվության համար, ինչը 2018թ. փաստացի ծախսի նկատմամբ պակաս է 125,215,4 հազար դրամով:
- Նախագծով առաջարկվում է 157,413.6 հազար դրամ հատկացնել «Թատրոնների հիմնանորոգում» ծրագրին՝ Երևանի «Հրաչյա Ղափլանյանի անվան» դրամատիկական թատրոնի հիմնանորոգման համար:
- Նախագծով առաջարկվում է 1,030,240.8 հազար դրամով ավելացնել «Նախադպրոցական ուսուցում» ծրագիրը՝ մանկապարտեզների աշխատակիցների աշխատավարձերի շուրջ 20%-ի ավելացման, Նուբարաշեն վարչական շրջանում «Արևամանուկ» 4 խմբանի մանկապարտեզի բացման և արդեն իսկ գործող թվով 4 մանկապարտեզներում նոր 5 խմբերի բացման համար:

- Նախագծով առաջարկվում է 142,200.0 հազար դրամով ավելացնել «Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում» ծրագիրը՝ Ալբերտ Ազարյանի անվան մարզադպրոցը հիմնանորոգելու համար:
- Նախագծով առաջարկվում է 170,000.0 հազար դրամով ավելացնել «Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում» ծրագիրը՝ մանկապարտեզներում կանաչ պատերի ստեղծման և թվով 160 մանկապարտեզներում հակահրդեհային համակարգի ներդրման համար:
- Նախագծով առաջարկվում է 1,700.0 հազար դրամով նվազեցնել «Դպրոցականների օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում» ծրագիրը:
- Նախագծով առաջարկվում է 2,000.0 հազար դրամով ավելացնել «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» ծրագիրը՝ վարչական շրջաններում սոցիալապես անապահով անձանց դրամական օգնություններ ցուցաբերելու համար:
- Նախագծով առաջարկվում է 8,612.0 հազար դրամով ավելացնել «Հասարակական կազմակերպություններին աջակցություն» ծրագիրը՝ սոցիալական հարցերով զբաղվող ՀԿ-ներին դրամական օժանդակություն ցուցաբերելու համար:
- Նախագծով առաջարկվում է «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռք բերման միջոցով իրականացնել 64,000.0 հազար դրամի չափով ներդրում՝ ՓԲԸ-ի վերցված փոխառությունները համաձայն ժամանակացույցի պարտավորությունների մարման նպատակով:
- Նախագծով նախատեսվում է վարչական մասի պահուստային ֆոնդը ավելացնել 1,968,442.2 հազար դրամով, նաև ձևավորել ֆոնդային մասի պահուստային ֆոնդ՝ 1,614,000.0 հազ. դրամի չափով, որից 485,000.0 հազար դրամն ուղղել մասնակցային բյուջեի համատեքստում Երևան քաղաքի բնակիչների կողմից առաջարկվող նոր ծրագրերի և գաղափարների իրագործելիության ուսումնասիրման և դրանց իրականացման համար:

- Հիմք ընդունելով նշված փոփոխությունները և վերաբաշխումները՝ բյուջեի վարչական և ֆոնդային մասերը հավասարակշռելու նպատակով նախագծով առաջարկվում է վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը նվազեցնել 2,305,766.4 հազար դրամով:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N47-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՍԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևանի քաղաքի 2019 թվականի բյուջեի եկամուտները ավելանում են 116,026.9 հազար դրամով, ծախսերը ավելանում են 7,286,977.3 հազար դրամով, դեֆիցիտը ավելանում է 7,170,950.4 հազար դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
 ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տարի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ		116,026.9	116,026.9	(2,305,766.4)
	այդ թվում՝				
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	7100	75,400.0	75,400.0	-
	այդ թվում՝				
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	7145	75,400.0	75,400.0	-
	այդ թվում՝				
1131	Տեղական տուրքեր	71452	75,400.0	75,400.0	-
	այդ թվում՝				
1149	ժգ) Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար		75,400.0	75,400.0	
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	7300	360.0	360.0	-
	այդ թվում՝				
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	7331	360.0	360.0	-
	որից՝				
1257	գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		360.0	360.0	-
1300	3. ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	7400	40,266.9	40,266.9	(2,305,766.4)
	այդ թվում՝				
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	7421	(9,033.1)	(9,033.1)	-
	այդ թվում՝				
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		(9,033.1)	(9,033.1)	
1350	3.5 Վարչական զանգույններ	7422	49,300.0	49,300.0	-
	այդ թվում՝				
1351	Տեղական վճարներ		49,300.0	49,300.0	
1390	3.9 Այլ եկամուտներ	7451	-	-	(2,305,766.4)
	այդ թվում՝				
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		-	-	(2,305,766.4)

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՄԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տարի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	7,286,977.3	116,026.9	4,865,184.0
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	233,975.2	41,885.9	192,089.3
				այդ թվում՝			
2110	01	1	0	<i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</i>	104,476.0	40,823.9	63,652.1
				որից՝			
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	104,476.0	40,823.9	63,652.1
2130	01	3	0	<i>Ընդհանուր բնույթի ծառայություններ</i>	742.0	562.0	180.0
				որից՝			
2131	01	3	1	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	742.0	562.0	180.0
2150	01	5	0	<i>Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ</i>	128,257.2	-	128,257.2
				որից՝			
2151	01	5	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	128,257.2	-	128,257.2
2160	01	6	0	<i>Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)</i>	500.0	500.0	-
				որից՝			
2161	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	500.0	500.0	-
2200	02	0	0	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	12,490.0	690.0	11,800.0
				այդ թվում՝			
2220	02	2	0	<i>Քաղաքացիական պաշտպանություն</i>	12,130.0	330.0	11,800.0
				որից՝			
2221	02	2	1	Քաղաքացիական պաշտպանություն	12,130.0	330.0	11,800.0
2250	02	5	0	<i>Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</i>	360.0	360.0	-
				որից՝			
2251	02	5	1	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	360.0	360.0	-
2400	04	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	605,501.0	(1,431,609.6)	2,037,110.6
				այդ թվում՝			
2420	04	2	0	<i>Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն</i>	18,584.2	-	18,584.2
				որից՝			
2424	04	2	4	Ոռոգում	18,584.2	-	18,584.2
2450	04	5	0	<i>Տրանսպորտ</i>	289,616.8	(1,528,909.6)	1,818,526.4

Տողի ՆՈՆ	Բաժին	Խումբ	Գաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				որից՝			
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	209,526.4	(1,519,000.0)	1,728,526.4
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	80,090.4	(9,909.6)	90,000.0
2490	04	9	0	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	297,300.0	97,300.0	200,000.0
				որից՝			
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	297,300.0	97,300.0	200,000.0
2500	05	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	385,500.0	224,000.0	161,500.0
				այդ թվում՝			
2510	05	1	0	Աղբահանում	40,000.0	-	40,000.0
				որից՝			
2511	05	1	1	Աղբահանում	40,000.0	-	40,000.0
2520	05	2	0	Կեղտաջրերի հեռացում	35,000.0	-	35,000.0
				որից՝			
3521	05	2	1	Կեղտաջրերի հեռացում	35,000.0	-	35,000.0
2560	05	6	0	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	310,500.0	224,000.0	86,500.0
				որից՝			
2561	05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	310,500.0	224,000.0	86,500.0
2600	06	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՊՈՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	533,802.5	283,232.0	250,570.5
				այդ թվում՝			
2610	06	1	0	Բնակարանային շինարարություն	32,000.0	-	32,000.0
				որից՝			
2611	06	1	1	Բնակարանային շինարարություն	32,000.0	-	32,000.0
2640	06	4	0	Փողոցների լուսավորում	40,000.0	-	40,000.0
				որից՝			
2641	06	4	1	Փողոցների լուսավորում	40,000.0	-	40,000.0
2660	06	6	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	461,802.5	283,232.0	178,570.5
				որից՝			
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	461,802.5	283,232.0	178,570.5
2700	07	0	0	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	-	21,500.0	(21,500.0)
				այդ թվում՝			
2710	07	1	0	Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	(21,500.0)	-	(21,500.0)
				որից՝			
2711	07	1	1	Ղեկավարողական ապրանքներ	(21,500.0)	-	(21,500.0)
2760	07	6	0	Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	21,500.0	21,500.0	-
				որից՝			
2761	07	6	1	Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	21,500.0	21,500.0	-
2800	08	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	581,913.6	324,500.0	257,413.6
				այդ թվում՝			
2810	08	1	0	Հանգստի և սպորտի ծառայություններ	199,500.0	99,500.0	100,000.0
				որից՝			
2811	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ	199,500.0	99,500.0	100,000.0

Տողի ՆՈՆ	Բաժին	Խումբ	Գաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են նրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2820	08	2	0	Մշակութային ծառայություններ	382,413.6	225,000.0	157,413.6
				որից՝			
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	225,000.0	225,000.0	-
2825	08	2	5	Արվեստ	157,413.6	-	157,413.6
2900	09	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	1,340,740.8	978,540.8	362,200.0
				այդ թվում՝			
2910	09	1	0	Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն	1,030,240.8	1,030,240.8	-
				որից՝			
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն	1,030,240.8	1,030,240.8	-
2950	09	5	0	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	142,200.0	(50,000.0)	192,200.0
				որից՝			
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	142,200.0	(50,000.0)	192,200.0
2960	09	6	0	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	168,300.0	(1,700.0)	170,000.0
				որից՝			
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	168,300.0	(1,700.0)	170,000.0
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	10,612.0	10,612.0	-
				այդ թվում՝			
3070	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	10,612.0	10,612.0	-
				որից՝			
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	10,612.0	10,612.0	-
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՏՍԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	3,582,442.2	(337,324.2)	1,614,000.0
				այդ թվում՝			
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ	3,582,442.2	(337,324.2)	1,614,000.0
				որից՝			
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	3,582,442.2	(337,324.2)	1,614,000.0

Հավելված N 3
 Երևան քաղաքի ավագանու
 2019 թվականի _____-ի
 N _____ - Ն որոշման

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են նրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		7,286,977.3	116,026.9	4,865,184.0
	այդ թվում՝				
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝	x	2,421,793.3	116,026.9	1,614,000.0
	այդ թվում՝				
4100	1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ	x	(533.4)	(533.4)	-
	այդ թվում՝				
4110	ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏՎԱՐՉԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ	x	(533.4)	(533.4)	-
	որից՝				
4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	(533.4)	(533.4)	-
4200	1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՉԵՈՒՔ ԲԵՐՈՒՄ	x	(741,798.5)	(741,798.5)	-
	այդ թվում՝				
4210	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	x	68,781.6	68,781.6	-
	որից՝				
4212	-Էներգետիկ ծառայություններ	4212	34,770.4	34,770.4	-
4213	-Կոմունալ ծառայություններ	4213	24,292.0	24,292.0	-
4214	-Կապի ծառայություններ	4214	(803.8)	(803.8)	-
4215	- Ապահովագրական ծախսեր	4215	443.0	443.0	-
4216	-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	10,080.0	10,080.0	-
4220	ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	x	(70,750.0)	(70,750.0)	-
	որից՝				
4222	-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	(70,750.0)	(70,750.0)	-
4230	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԵՈՒՔ ԲԵՐՈՒՄ	x	197,774.9	197,774.9	-
	որից՝				
4231	-Վարչական ծառայություններ	4231	144.4	144.4	-
4232	-Համակարգչային ծառայություններ	4232	420.0	420.0	-
4233	-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233	(20,000.0)	(20,000.0)	-
4234	-Տեղակատվական ծառայություններ	4234	55.0	55.0	-
4236	-Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	4236	26,600.0	26,600.0	-
4238	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	190,555.5	190,555.5	-
4240	ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԵՈՒՔ ԲԵՐՈՒՄ	x	21,500.0	21,500.0	-
	որից՝				

Տարի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4241	-Մասնագիտական ծառայություններ	4241	21,500.0	21,500.0	-
4250	ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր)	x	(1,119,610.5)	(1,119,610.5)	-
	որից՝				
4251	-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	(1,169,881.2)	(1,169,881.2)	-
4252	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	50,270.7	50,270.7	-
4260	ՆՅՈՒԹԵՐ	x	160,505.5	160,505.5	-
	որից՝				
4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	3,993.1	3,993.1	-
4264	-Տրանսպորտային նյութեր	4264	25,258.4	25,258.4	-
4267	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	2,634.0	2,634.0	-
4268	-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	128,620.0	128,620.0	-
4400	1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	x	1,196,554.4	1,196,554.4	-
	այդ թվում՝				
4410	ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	x	1,203,191.2	1,203,191.2	-
	որից՝				
4411	-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	1,202,831.2	1,202,831.2	-
4412	- Սուբսիդիաներ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4512	360.0	360.0	-
4420	ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ (ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	x	(6,636.8)	(6,636.8)	-
	որից՝				
4421	-Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին	4521	(6,636.8)	(6,636.8)	-
4500	1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	x	22,000.0	22,000.0	-
	այդ թվում՝				
4530	ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՍԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ	x	22,000.0	22,000.0	-
	որից՝				
4532	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին	4638	12,000.0	12,000.0	-
4533	- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	10,000.0	10,000.0	-
4600	1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	x	2,000.0	2,000.0	-
	այդ թվում՝				
4630	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ)	x	2,000.0	2,000.0	-
	որից՝				
4634	-Այլ նպաստներ բյուջեից	4729	2,000.0	2,000.0	-
4700	1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	x	3,557,570.8	(362,195.6)	1,614,000.0
	այդ թվում՝				

Տարի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4710	ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	x	(25,280.7)	(25,280.7)	-
	որից՝				
4712	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	(25,280.7)	(25,280.7)	-
4720	ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՍԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՍՅԱՆՑ ՆԿԱՍԱՍՔ	x	609.3	609.3	-
	որից՝				
4723	-Պարտադիր վճարներ	4823	609.3	609.3	-
4760	ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	x	(200.0)	(200.0)	-
	որից՝				
4761	-Այլ ծախսեր	4861	(200.0)	(200.0)	-
4770	ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	3,582,442.2	(337,324.2)	1,614,000.0
	որից՝				
4771	-Պահուստային միջոցներ	4891	3,582,442.2	1,968,442.2	1,614,000.0
4772	այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	x	-	(2,305,766.4)	-
5000	Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	x	3,251,184.0	-	3,251,184.0
	այդ թվում՝				
5100	1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	3,251,184.0	-	3,251,184.0
	այդ թվում՝				
5110	ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	x	2,850,994.7	-	2,850,994.7
	որից՝				
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	5112	381,500.0	-	381,500.0
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	2,469,494.7	-	2,469,494.7
5120	ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	x	271,932.1	-	271,932.1
	որից՝				
5121	- Տրանսպորտային սարքավորումներ	5121	32,000.0	-	32,000.0
5122	- Վարչական սարքավորումներ	5122	30,882.1	-	30,882.1
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	209,050.0	-	209,050.0
5130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	128,257.2	-	128,257.2
	որից՝				
5134	- Նախագծահետազոտական ծախսեր	5134	128,257.2	-	128,257.2

Հավելված N 4
 Երևան քաղաքի ավագանու
 2019 թվականի _____-ի
 N _____ - ն որոշման

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ N 4
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տողի NN		Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
			վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5
8000	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՍ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)	(7,170,950.4)	0.0	(7,170,950.4)

Հավելված N 5
 Երևան քաղաքի ավագանու
 2019 թվականի _____-ի
 N _____ - Ն որոշման

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
8010	ԸՆԴԱՄԵՆԸ՝		7,170,950.4	-	7,170,950.4
	այդ թվում՝				
8100	Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ		7,170,950.4	-	7,170,950.4
	այդ թվում՝				
8160	2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ		7,170,950.4	-	7,170,950.4
	այդ թվում՝				
8161	2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն		(64,000.0)	-	(64,000.0)
	որից՝				
8164	- բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում	6213	(64,000.0)	-	(64,000.0)
8190	2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝		7,234,950.4	-	7,234,950.4
	այդ թվում՝				
8191	2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ	9320	4,127,768.2	4,127,768.2	-
	որից՝				
8193	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս		4,127,768.2	4,127,768.2	-
8194	2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ	9330	7,234,950.4	-	7,234,950.4
	որից՝				
8195	- առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի		3,107,182.2	-	3,107,182.2
8196	- վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը		4,127,768.2	-	4,127,768.2

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
 ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տողի N	Բաժին	Խումբ	Գում	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված N	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		7,286,977.3	116,026.9	4,865,184.0
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		233,975.2	41,885.9	192,089.3
				այդ թվում՝				
2110	01	1	0	<i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</i>		104,476.0	40,823.9	63,652.1
				որից՝				
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում		104,476.0	40,823.9	63,652.1
				այդ թվում՝				
				<i>1. Կառավարման մարմնի պահպանում</i>		80,576.0	26,123.9	54,452.1
				-Էներգետիկ ծառայություններ	4212	(5,125.0)	(5,125.0)	-
				-Կապի ծառայություններ	4214	(1,000.0)	(1,000.0)	-
				- Ապահովագրական ծախսեր	4215	443.0	443.0	-
				-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	10,080.0	10,080.0	-
				-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	(70,750.0)	(70,750.0)	-
				-Համակարգչային ծառայություններ	4232	420.0	420.0	-
				-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233	(20,000.0)	(20,000.0)	-
				-Տեղակատվական ծառայություններ	4234	55.0	55.0	-
				-Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	4236	26,600.0	26,600.0	-
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	3,100.0	3,100.0	-
				-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	50,219.7	50,219.7	-
				-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	5,818.0	5,818.0	-
				-Տրանսպորտային նյութեր	4264	25,258.4	25,258.4	-
				-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	100.0	100.0	-
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	1,000.0	1,000.0	-
				-Պարտադիր վճարներ	4823	104.8	104.8	-
				-Այլ ծախսեր	4861	(200.0)	(200.0)	-
				-Վարչական սարքավորումներ	5122	18,902.1	-	18,902.1
				-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	35,550.0	-	35,550.0
				<i>2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում</i>		23,900.0	14,700.0	9,200.0
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	14,700.0	14,700.0	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	9,200.0	-	9,200.0
2130	01	3	0	<i>Ընդհանուր բնույթի ծառայություններ</i>		742.0	562.0	180.0
				որից՝				
2133	01	3	1	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ		742.0	562.0	180.0
				այդ թվում՝				
